## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24Խ/127 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24Խ/127 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հունվարի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** ծառայությունների ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունվարի 29-ին կատարված փոփոխությունների արդյունքում 2026 թվականի համար հաստատվել է Պայմանագրի Հավելված N 3-ով և 16.01.2025թ. կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-երը, համաձայն՝ 2026 թվականի հունվարի 29-ին կնքված Համաձայնագիր 2-ի համապատասխանաբար Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2024 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24Խ/127 ծածկագրով պայմանագրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայությունների ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայությունների ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**